

Հայաստանի Հանրապետության Նախագահ
Պարոն Սերժ Սարգսյանին
ՀՀ, ք. Երևան 0077, Մ. Բաղրամյան 26

(ա.ա.հ.)

Անձնագիր՝

(սերիա/համար)

Տրված

կողմից

թ.

(գրանցման հասցե)

Պարոն Նախագահ,

Ինչպես գիտեք, ՀՀ սահմանադրական դատարանն իր 2014 թվականի ապրիլի 2-ի ՄԴՈ-1142 որոշման եզրափակիչ մասի 1-5-րդ կետերով «Կուտակային կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի մի շարք իրավանորմեր ճանաչեց հակասահմանադրական և անվավեր: Իսկ 6-րդ կետով սահմանեց, որ նշյալ օրենքի 7-րդ հոդվածի 2-10-րդ մասերի, 8, 37, 38, 45-րդ հոդվածների, 49-րդ հոդվածի 2-րդ մասի և 86-րդ հոդվածի վեճի առարկա դրույթները համապատասխանում են ՀՀ Սահմանադրությանը՝ այն սահմանադրաիրավական բովանդակությամբ, համաձայն որի՝ դրանցով նախատեսված իրավակարգավորումները չեն կարող **հիմքում ունենալ, մեկնաբանվել և կիրառվել մարդկանց հայեցողությունից անկախ** նրանց սեփականության իրավունքի սահմանափակում ենթադրող իրավակարգավորման համատեքստում: Ըստ նույն որոշման 8-րդ կետի, վերոհիշյալ որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

Այնուամենայնիվ, այսօր գործադիր իշխանությունը՝ ի դեմս ՀՀ կառավարության, ակնհայտորեն ոտնահարում է թե՛ ՀՀ Սահմանադրության 3-րդ հոդվածը, ըստ որի պետությունը սահմանափակված է մարդու եւ քաղաքացու հիմնական իրավունքներով եւ ազատություններով՝ որպես անմիջականորեն գործող իրավունք, և թե՛ ՀՀ Սահմանադրական դատարանի որոշումը. անկախ անձի կամքից ու հայեցողությունից շարունակվում են ապօրինի գանձվել պարտադիր կուտակային կենսաթոշակային վճարները՝ սահմանափակելով վերջինիս սեփականության իրավունքը՝ մի բան, ինչը թույլ չի տալիս սահմանադրական դատարանի որոշումը:

Համաձայն ՀՀ սահմանադրության 49 հոդվածի՝ երկրի նախագահը, հանդիսանալով պետության գլուխը, հետևում է ՀՀ Սահմանադրության պահպանմանը, ըստ այդմ էլ՝ նաև

սահմանադրական դատարանի որոշումների պատշաճ կատարմանը: Դուք, ստանձնելով Հայաստանի Հանրապետության նախագահի պաշտոնը, երդվել եք, որ անվերապահորեն կատարելու եք ՀՀ Սահմանադրության պահանջները՝ հարգել մարդու և քաղաքացու իրավունքներն ու ազատությունները, ապահովել Հայաստանի Հանրապետության անկախությունը, տարածքային ամբողջականությունը և անվտանգությունը՝ ի փառս Հայաստանի Հանրապետության և ի բարօրություն Հայաստանի Հանրապետության ժողովրդի: Այժմ, ինչպես ականատես ենք լինում և Դուք էլ շեշտեցիք Ձեր խոսքում, ժողովրդի 80%-ը կամ շատ ավելին դեմ է մի օրենքի, որի դրույթները ՀՀ Սահմանադրական դատարանի կողմից արդեն ճանաչվել են հակասահմանադրական: Սակայն ՀՀ կառավարությունը դիրքորոշում է հայտնել, որ ժողովրդից գանձելու է այդ գումարները, ինչը այս համատեքստում համարում են անընդունելի և դատապարտելի:

Ելնելով վերոգրյալից՝ ես, որպես ՀՀ քաղաքացի, դիմում եմ Ձեզ՝ երկրի նախագահին, պահանջելով մնալ հավատարիմ ՀՀ Սահմանադրության ու Ավետարանի վրա տված Ձեր երդմանը, կատարել ՀՀ Սահմանադրությամբ սահմանված Ձեր պարտականությունները՝ ապահովելու ՀՀ Սահմանադրության ու Սահմանադրական դատարանի որոշման պահանջների անհապաղ կատարումը գործադիր իշխանության կողմից:

Խնդրում եմ գրավոր պատասխանել դիմումիս՝ ծանուցելով սույն պահանջի կատարման հետ կապված քայլերի ու հնարավոր ժամանակացույցի մասին:

Հարգանքով,

(Անուն ազգանուն/ ստորագրությունը)

« » ապրիլի 2014 թվ.